

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ  
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ  
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀՆԱՐՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՁԵՎԵՐԸ  
ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԻ ԴԱՍԱԳՈՐԾՆԹԱՑՈՒՄ

ԱՌԱՐԿԱ ԴԱՍՎԱՐ (ՄԱՅՐԵՆԻ, ՄԱԹԵՄԱՏԻԿԱ)

ՀԵՂԻՆԱԿ Նաիրա Լևոնյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Շինուհայրի միջնակարգ դպրոց

*Աշխատանքը թույլատրված է պաշտպանության*

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. Ս. Ալավերդյան, ԳՊՀ դասախոս

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
Ինչպես է մարդը սովորում .....	5
Արդյունավետ ուսուցման յոթ ձևեր.....	7
Ուսուցման մեթոդներ և հնարներ.....	11
Եզրակացություններ.....	16
Օգտագործած գրականության ցանկ.....	17

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Հետազոտության թեմայի արդիականությունը:** Ժամանակաշրջանի հասարակական պահանջի բավարարման, մանկավարժական գործընթացի կատարելագործման ու արդյունավետության բարձրացման նպատակով այսօր մանկավարժական որոնումների արդյունքում կարևորվում է ուսուցման հնարների արդյունավետ կիրառումը տարրական դպրոցում, ինչը հնարավորություն է տալիս մանկավարժական գործընթացը դարձնել առավել ակտիվ, սովորողների նկատմամբ անհատական մոտեցում ցուցաբերել, հաշվի առնել աշակերտների հետաքրքրություններն ու նախասիրությունները՝ աշակերտների պասիվ դերը փոխարինելով առավել ակտիվ՝ սուբյեկտի դերով:

**Հետազոտական աշխատանքի նպատակն է՝** վերհանել ուսուցման հնարների արդյունավետ կիրառման հնարավորությունները տարրական դասարաններում:

**Հետազոտական աշխատանքի խնդիրներն են՝**

- **դիտարկել** ուսուցման արդյունավետ հնարները,
- **ներկայացնել** ուսուցման արդյունավետ հնարների կիրառման տարբեր հնարավորությունները,
- **բացահայտել** տարրական կրթության բովանդակության նորացման խնդիրները:

**Հետազոտության տեսական նշանակությունն է** ցույց տալ, որ հանրակրթության մեջ տարրական կրթության մակարդակում սովորողների հոգևոր-բարոյական դաստիարակության և սոցիալականացման նպատակն է բանիմաց, ստեղծագործ, բարձր բարոյական ՀՀ քաղաքացու ձևավորմանը և զարգացմանը նպաստելը:

**Հետազոտության գործնական նշանակությունը ներկայացնել,** որ հասարակության զարգացման ներկա պայմաններում կարևորվում է, որ մարդիկ ունենան ոչ միայն գիտելիքների որոշակի պաշար կամ էլ ձեռք բերված գիտելիքները կիրառելու կարողություն, այլև կատարեն ինքնուրույն որոնողական ու հետազոտական աշխատանք, լինեն նախաձեռնող, տարբեր բնագավառներում իրենց

ներդրումն ունենան, նորույթ ստեղծեն: Ժամանակակից արագ փոփոխվող աշխարհում ու տեղեկատվության կուտակման արդի պայմաններում հասարակությանը անհրաժեշտ են ճանաչողական, ստեղծագործական կարողություններով հասարակության ակտիվ անդամներ, քանի որ դարերի ընթացքում ստեղծվածը միայն մտապահելը, իմանալն ու կիրառելը արդի ժամանակաշրջանում չի կարող ամբողջությամբ բավարարել ժամանակակից հասարակության պահանջը:

## *ԻՆՉՊԵՍ Է ՄԱՐԴԸ ՍՈՎՈՐՈՒՄ*

Գիտության զարգացումը մեզ լավ հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես է տեղի ունենում ուսուցման գործընթացը: Ուսուցման գործընթացը լավ կազմակերպելու և աշակերտների կողմից այն յուրացնելու համար պետք է ուշադրության կենտրոնացում: Ուշադրությունը կարևոր է ոչ միայն ուսուցման համար, այլև այսօր համարվում է կյանքի կարևորագույն ռեսուրսը: Պատահական չէ, որ Նոբելյան մրցանակի դափնեկիր Հերբերտ Սայմոնը շրջանառության մեջ է դրել «ուշադրության տնտեսություն» արտահայտությունը: Ժամանակակից կրթության մեծագույն խնդիրներից մեկն այն է, որ աշակերտների ուշադրությունը գրավված է տարբեր բիզնես գործունեության տասակների կողմից: Եվ այդ մրցակցության մեջ կրթությունը պարտվողի դերում է: Մարդկային ապրելակերպում ընդունված է, որ ի տարբերություն չափահասների՝ երեխաները ոչնչով զբաղված չեն և նրանք պետք է զբաղված լինեն միայն սովորելով: Սակայն ներկայիս իրավիճակը տալիս է հակառակ պնդումը, որ երեխաների մեծ մասին զբաղեցնում է ֆուտբոլային հանդիպումները, սերիալները, տարատեսակ խաղերը, ինչպես նաև սոցիալական ցանցերը: Որպեսզի սովորելու գործընթացը հնարավոր լինի, կրթության համակարգը պետք է փորձի գրավել աշակերտների ուշադրությունը:

Այսպիսով՝ սովորելը հնարավոր դարձնելու առաջին քայլը ուշադրության կենտրոնացումն է: Երբ աշակերտը կենտրոնացնում է ուշադրությունը, ուսուցանվող նյութը տեղափոխվում է աշխատանքային հիշողության մեջ: Այս հիշողության հնարավորությունները սահմանափակ են, այսինքն երեխան չի կարող շատ բան սովորել: Ըստ գիտնականների՝ երեխաները կարող են միանգամից սովորել 9-10 նոր բան, որոշներն էլ կարծում են, որ կսովորի ավելի քիչ՝ ընդամենը 4-5 նոր բան:

Շատ դեպքեր են լինում, երբ դասագրքերում, դասերի ժամանակ ականատես ենք լինում իրավիճակների, երբ կարճ ժամանակում աշակերտներին փոխանցվում են մի քանի տասնյակ նոր անուններ, տերմիններ, հասկացություններ: Որպեսզի աշակերտները շատ բան սովորեն, մասնագետները խորհուրդ են տալիս նոր նյութը սովորեցնել կապակցված: Ինչպես նաև օգտագործել գծապատկերներ, պատմություններ, այլ կերպ ասած՝ հարուստ դիդակտիկ պարագաներ, որպեսզի

աշակերտները կարողանան լավ յուրացնել նյութը: Կարևոր է նաև նյութի կապակցված ուսուցումը: Այսինքն փաստերը պետք է լինեն կապակցված, այլ ոչ անջատ:

X Անջատ փաստերով ուսուցում

✓ Կապակցված ուսուցում

Եթե աշակերտներին առաջարկենք 5 վարկյան նայելուց հետո հիշել հետևյալ տառերը, ապա շատ ցածր արդյունք կստանանք

Եթե աշակերտներին առաջարկեք 5 վարկյան նայելուց հետո հիշել հետևյալ տառերի միացությունները, ապա արդյունքը կլինի գրեթե 100%

օ

Օդ

դվ

Վեց

եց

ԵՊՀ

եպ

ԼՂՀ

հլ

ՏՈԻՆ

դհ

տու

ն

Սույն պատկերում երկու դեպքում էլ օգտագործված է տառերի նույն շարքը: Պարզապես երկրորդ դեպքում տառերի կապակցումն իմաստալից է: Նոր գիտելիքներ ձեռք բերելու աշակերտի հնարավորությունը մեշապես կախված է այն

բանից, թե գիտելիքների նախնական ինչ պաշար ունի աշակերտը: Գիտելիքների այդ պաշարը պահեստավորվում է երկարատև հիշողության մեջ: Այն աշակերտները, ովքեր ունեն գիտելիքների հարուստ պաշար, ավելի շատ բան կարող են վերցնել նոր ուսուցանվող նյութից: Սրանից կարելի է կարևոր եզրահանգում կատարել՝ որքան շատ գիտելիքներ ունեն աշակերտները, այնքան հեշտ ու շատ գիտելիքներ կարող է ձեռք բերել: Եթե կարճաժամկետ հիշողության առանձնահատկությունը սահմանափակ լինելն է, ապա երկարաժամկետ հիշողության առանձնահատկությունն այն է, որ այնտեղ մնում է խորքային առումով լավ հասկացած գիտելիքը: Այսինքն՝ այն ամենը, ինչը երեխան մակերեսային է հասկացել, մնայուն չէ: Եվ այսպիսով, որպեսզի աշակերտները ունենան մնայուն գիտելիքներ, պետք է ուսուցանվող նյութը կրկնելու, ամրապնդելու, կիրառելու, կապակցելու հնարավորություններ ընձեռնվեն: Ընդ որում դա պետք է արվի կանոնավոր և շարունակական ձևով: Այլ կերպ ասած՝ պետք է կարևորել ոչ միայն ուսումնական ծրագրի ընդգրկումը, այլև խորությունը: Անընդունելի է գիտելիքի, հիշողության դերը նսեմացնող մոտեցումները: Նոբելյան մրցանակակիր Ջեյմս Ռոթթսոնը, որը ԴՆԹ հեղափոխության հեղինակներից է, նշում է. «Երբ ես փորձեցի վերլուծել իմ հաջողության պատճառները, հասկացա, որ դա կապված է իմ գիտելիքների հետ: Ճեղքումների համար պետք են նոր գաղափարներ, բայց դրանց հիմքը գիտելիքներն են: Իսկ գիտելիքներ ունենալու համար պետք է շատ կարդալ»:

---

### *Արդյունավետ ուսուցման յոթ մոտեցումներ*

Վերջին տարիներին բազմաթիվ մասնագետներ նշում են, որ մտաբերումը ուսուցման առավել արդյունավետ ձևերից է: Մտաբերումը մտապահված գիտելիքի ակտիվացումն է իմացածը դուրս բերելն է: Ուսուցման գործընթացում մենք կարևորում ենք գիտելիք տալը: Բայց պարզվում է, որ սովորելու չափանիշը իմացածը դուրս բերելն է:

## **2. Նյութի սփռում ժամանակի մեջ**

Գիտնականների փորձը ցույց է տվել, որ կարճ ժամանակում սովորածը շատ ավելի արագ է մոռացվում, քան երկար ժամանակում սովորածը:

Հետևաբար՝ շատ ավելի արդյունավետ է քննություններին պատրաստվել ոչ թե վերջին մեկ –երկու օրվա ընթացքում, այլ ավելի տևական ժամանակում: Իսկ կարևոր թեմաները ոչ թե պետք է ուսուցանել մեկ դասի ընթացքում և առաջ անցնել, այլ պետք է դրանց անընդհատ անդրադառնալ:

### **Խառը ուսուցում**

Խառը ուսուցումը կապված է ժամանակի մեջ նյութի սփռման հետ:

Հետազոտությունները ցույց են տվել, որ ուսուցումն առավել արդյունավետ է, երբ ուսումնական նյութը մատուցվում է խառը:

Սա հատկապես տեսանելի է մատեմատիկայի դեպքում:

Պատկերացնենք, օրինակ, խնդիրների հետևյալ երկու շարքերը:

Խնդիրների առաջին շարք

AAAA    BBBB    CCCC    DDDD

---

Խնդիրների երկրորդ շարք

ABCD    ABCD    ABCD    ABCD

### **√Խառը ուսուցման դեպքում աշակերտների գիտելիքներն ավելի մնայուն են**

Առաջին դեպքում ուսուցիչը աշակերտներին առաջարկում է լուծել միայն A տեսակի խնդիրներ, հետո՝ միայն B, ապա՝ միայն C, իսկ դրանից հետո՝ միայն D: Երկրորդ դեպքում ուսուցիչն առաջարկում է լուծել մեկական A, B, C, D տեսակի խնդիրներ, հաջորդ դասին նորրից յուրաքանչյուր տեսակից մեկական և այդպես մի քանի դաս: Պարզվում է, որ խառը ուսուցման դեպքում արդյունքներն ավելի լավ են լինում:

### **4.Մանրամասնում**

Ուսուցման արդյունավետ գործիքներից մեկը մանրամասնումն է: Դասավանդողների մոտ առկա է մի երևույթ, որը կոչվում է <<գիտելիքի անեծք>>: Գիտելիքի անեծքը պայմանավորված է այն հանգամանքով, որ գիտելիք ունեցող ուսուցիչը սովորեցնում է դեռևս գիտելիք չունեցող աշակերտին:


Խնդիրն այն է, որ գիտելիք ունեցողը հաճախ չի պատկերացնում, թե ինչ է տեղի ունենում դեռևս չիմացող աշակերտի հետ: Պատահական չէ, որ հաճախ ուսուցիչները



զարմանում են, թե ինչու աշակերտները հասարակ բաները չեն հասկանում: Իրականում այդ ամենը հասարակ է թվում իմացողի տեսանկյունից, իսկ չիմացողի տեսանկյունից կարող է այլ կերպ լինել: Ուստի շատ կարևոր է աշակերտներին սովորեցնելիս մանրամասնել նյութը :

Շատ արդյունավետ հնար է մանրամասնող հետադարձ կապը:

***✓ Հաճախ հետադարձ կապ տալիս ուսուցիչները միայն նշում են, թե ինչն է ճիշտ կամ սխալ, մինչդեռ կարևոր է մանրամասնել, թե ինչու է դա սխալ***




### ***5. Օրինակներով ուսուցում***

Ուսուցման գործընթացում ուսուցիչները հաճախ են օրինակներ օգտագործում, սակայն դրանց հետ կապված կարևոր է իմանալ երկու բան: Առաջին՝ հաճախ ուսուցիչները բավարարվում են մեկ օրինակ բերելով:

Մինչդեռ.

***✓ Եթե ուսուցիչը մեկի փոխարեն երկու կամ երեք օրինակ բերի, ապա նյութը հասկացող աշակերտների թիվն էապես կավելանա***



**Երկրորդ՝** շատ կարևոր է, որ աշակերտներին առաջադրանքներ տալիս տրվեն այնպիսի օրինակներ, որոնցու հարցի պատասխանի մի մասը լինի: Մա աշակերտներին քայլ առա քայլ սովորելու հնարավորություն է տալիս:

## **6. Պատկերի և տեքստի համադրում**

Մենք ապրում ենք մի ժամանակում, երբ պատկերներ ստեղծելու հնարավորությունները մեծացել են: Արդյունքում աշակերտն ավելի լավ է յուրացնում այն ամենը ինչը ուղեկցվում է պատկերներով: Դրանք կարող են լինել նկարներ, լուսանկարներ, գծագրեր, գծապատկերներ, ինֆոգրաֆիկաներ:

Հետևաբար՝

***✓Արդյունավետ ուսուցման գործընթացում պարտադիր է տեքստի, խոսքի ուղեկցումը պատկերներով***



## **7. Մետախմբացություն**

Ուսուցման գործընթացում շատ մեծ դեր ունի այն հանգամանքը, թե որքանով են աշակերտները տեղյակ իրենց իմացածից ու չիմացածից: Այս երևույթը կոչվում է մետախմբացություն:

Այս դեպքում աշակերտը կարողանու է իրեն կողքից նայել և հասկանալ իր իմացածն ու չիմացածը:

Ահա այն երեք հարցերը, որը պետք է տա յուրաքանչյուր սովորող:



1. Որտե՞ղ եմ ես:
2. Որտե՞ղ պիտի լինեի:
3. Ինչպե՞ս հասնեմ այնտեղ, որտեղ պիտի լինեի:

### ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ ԵՎ ՀՆԱՐՆԵՐ

Վերջին տարիներին հաճախ են հակադրում ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները: Ընդ որում՝ այդ հակադրումը կատարվում է այնհամատեքստում, որ ինտերակտիվ և աշակերտակենտրոն մոտեցումները բացարձակապես լավ են, իսկ ավանդական և ուսուցչակենտրոն մոտեցումները՝ վատը: Այս մոտեցումը գիտականորեն հիմնավորված չէ:

Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը: Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար: Բացի այդ՝ ինտերակտիվ ուսուցումն ունի որոշակի ռիսկեր, որոնք անտեսել չի կարելի:

Օրինակ՝ խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ «գլուխ են պահում»: Արտաքուստ թվում է, թե երեխաներն ակտիվ են, բայց վերջում պարզվում է, որ մնացորդային գիտելիքների մակարդակը ցածր է:

Հետևաբար՝ նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում: Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել:

Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս: Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին: Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան:

Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել:

Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը:

Սույն հետազոտության ժամանակ մենք դասապրոցեսը բաժանում ենք երեք մասի և յուրաքանչյուրի համար առաջարկում մեթոդներ և հնարներ՝

1. դասի սկիզբ,

2. նոր նյութի բացատրություն,

3. սովորածը պարզելու հնարներ:

### ***Դասի սկիզբ***

Յուրաքանչյուր հաղորդակցության մեջ կարևոր է սկիզբը: Մարդկանց մոտ սովորաբար տպավորվում է հաղորդակցության սկզբի և վերջի հատվածները:

Հազորդակցման առաջին րոպեներին է մարդը որոշում դիմացինին լսել, թե ոչ: Այդ առումով դասիի հաջող սկիզբը շատ կարևոր է: Եթե ուսուցչին հաջողվի դասի առաջին րոպեներին գրավել աշակերտների ուշադրությունը, ապա դա էապես կնպաստի դասի արդյունավետ ընթացքին:

Ներկայացնել դասը սկսելու մի քանի հնարներ:

#### **1. Խորհրդատվություն**

Երեխաները սիրում են գաղտնիքներ: Գաղտնիքների առկայությունը մոտիվացնում է նրանց: Երեխաները ցանկանում են րոպե առաջ բացահայտել գաղտնիքը:

#### **2. Գուշակություն**

Սովորողների հետաքրքրությունը խթանելու նպատակով կարելի է նյութի հիմնական կարևոր հասկացությունները կամ վերնագիրը թերթիկների վրա գրել, կտրատել

առանձին բառերի և պահել դասասենյակում՝ աչքից հեռու տեղերում: Դասը սկսելուց առաջ սովորողներին առաջարկել գտնել դրանք, համադրել և ստանալ գլխավոր միտքը կամ վերնագիրը:

### **3. Զարմանք և անսպասելիություն**

Երեխաները սիրում են զարմանալ: Անսպասելի մտքերը գրավում են նրանց ուշադրությունը: Հետևաբար՝ դասը անսպասելի նորությունով սկսելը շատ կարևոր է:

### **4. Մեջբերումներ**

Բավականին արդյունավետ է դասի սկզբում որոշակի սկզբնադրյուրի օգտագործումը: Դա կարող է լինել աֆորիզմ, թևավոր խոսք՝ այդ ձևով տալով նախագիտելիք, ստեղծելով պրոբլեմային իրավիճակ, աշխատանքային տրամադրություն:

### **5. Գիտեմ, ուզում եմ իմանալ, սովորեցի (ԳՈՒՄ)**

Դասը սկսելու շատ հայտնի հնար է նաև ԳՈՒՄ-ը: Դասասկզբում ուսուցիչը գծում է Մ –աձև աղյուսակ, որի ձախ սյունակում գրում է՝ գիտեմ, կենտրոնում՝ ուզում եմ իմանալ, աջ սյունակում՝ սովորեցի բառերը: Դասի թեման հայտնելուց հետո ուսուցիչը դիմում է աշակերտներին հետևյալ հարցով. Ինչ գիտեք այս թեմայի հասկացության մասին: Ապա լրացվում է գիտեմ սյունակը:

### **6. Մտագրոհ**

Դասի մասնակցային սկիզբ ապահովող լավագույն մեթոդներից մեկը մտագրոհն է: Մտագրոհի միջոցով ուսուցիչը դասարանից հավաքում է մտքեր տվյալ թեմայի վերաբերյալ: Որպեսզի բոլորը մասնակցեն դասապրոցեսին, կարելի է մտագրոհը տալ գրավոր եղանակով: Ուսուցիչն աշակերտներին առաջարկում է տվյալ թեմայի համար թղթի վրա գրել իրենց մտքերը և հանձնել իրեն: Այս մոտեցումը չի փոխարինում բանավորին, պարզապես լրացնում է այն:

### **7. Համագործակցություն, հակամարտություն, համակեցություն:**

Ուսուցիչը դասարանից դուրս է ուղարկում երեք սովորողների, չասելով՝ ինչու: Դասարանին ներկայացնում է դասի թեմայի հետ կապված որևէ պատկեր, ապա դրսի երեխաներից մեկը ներս է գալիս, 15 վայրկյան նայում նկարը որից հետո իր տեսածը

ներկայացնում է երկրորդին, վերջինս էլ՝ երրորդին, ով դասարանին պատմում է՝ ինչի մասին է խոսքը և կազմակերպվում է քննարկում – վերլուծություն:

### **Նոր նյութի բացատրություն**

Նոր նյութի բացատրության ժամանակ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ աշակերտը միանգամից չի կարող շատ բան սովորել:

Այդ առումով նոր նյութ բացատրելիս շատ կարևոր է այն փոքր կտորներով բացատրելը: 5-7 րոպե նյութը ներկայացնելուց հետո անհրաժեշտ է կանգ առնել, հարցերի միջոցով պարզել՝ արդյո՞ք հասկանում են երեխաները նոր ներկայացված նյութը: Ապա ևս 5-7 րոպե ծախսել նոր նյութի մատուցման վրա:

Շատ կարևոր է նախադասությունների չափը:

Նոր նյութը բացատրելիս կարևոր է օգտագործել գծապատկերներ: Ապացուցված է, որ աշակերտներն ավելի լավ են սովորում, երբ խոսքն ու պատկերը զուգակցվում են:

Նոր նյութի մատուցման փուլում շատ կարևոր է նաև արդեն իմացածի հետ կապակցումը: Մարդը սովորում է այն դեպքում, երբ կարողանում է նոր գիտելիքը կապակցել արդեն իմացածի հետ: Շատ հետաքրքիր մեթոդներ կան, որ կարելի է օգտագործել նոր նյութի բացատրության ժամանակ: Այդ մեթոդներից է օրինակ՝

**1.«Կենտրոններով աշխատանք»-ը**, որի միջոցով կարելի է կազմել 4-5 հոգանոց խմբեր: Այդ կենտրոնները կազմված կլինեն հետազոտողներից, ստեղծագործողներից, գրավոր աշխատանքի կենտրոնից, բացահայտողներից:

**Բացահայտողների կենտրոն** աշխատողները կընթերցեն տեքստը, կկատարեն նշումներ, վեր կհանեն վերջինիս հիմնական միտքը, կներկայացնեն ընկերներին:


**Հետազոտողների կենտրոնում** աշխատողները կընթերցեն տեքստը, կօգտվեն այլ աղբյուրներից՝ համացանց, գրականություն, կփորձեն լրացուցիչ հետաքրքիր նյութեր հայթաթել տեքստի վերաբերյալ:

**Ստեղծագործողների կենտրոնում** աշխատողները տեքստի առանձնահատկություններից էլնելով, կփորձեն այն որևէ կերպ վերարտադրեն, բեմականացնեն, նկարագարդեն, երգեն:

**Գրավոր աշխատանքի կենտրոնում** աշխատողները կրն՞թեցնեն տեքստը և կիրականացնեն լեզվական կամ բառային աշխատանք՝ պահանջին համապատասխան: Այնուհետև խմբերը կսկսեն ներկայացնել միմյան իրենց աշխատանքները:

**Սովորածը պարզելու հնարներ:** Այս փուլը ԽԻԿ համակարգի կշռադատման փուլ է, որտեղ կարելի է օգտագործել մի շարք մեթոդներ: Օրինակ՝ **Ֆրայերի մոդել** մեթոդը, որը շատ արդյունավետ գործիք է սովորածը պարզելու համար: Ուսուցիչը քառաբաժանի կենտրոնում գրում է հասկացության, երևույթի, առարկայի անունը, ապա՝ առաջարկում վերևի ձախ անկյունում գրել հասկացության սահմանումը, վերևի աջ անկյունում այդ հասկացության պատկերային արտահայտությունը: Դա կարող է լինել ձեռքով նկարված պատկեր, գծապատկեր, աղյուսակ: Ներքևի ձախ անկյունում գրել օրինակներ, որոնք վերաբերում են այն հասկացությանը, ներքևի աջ անկյունում՝ օրինակներ, որոնք չեն վերաբերում այդ հասկացությանը:

**Ֆրայերի մոդել**



Կարելի է օգտագործել նմանատիպ շատ մեթոդներ, ուսուցման որակն ավելի արդյունավետ դարձնելու համար:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ելնելով հետազոտական աշխատանքում առաջադրված խնդիրներից՝ կատարել ենք հետևյալ եզրակացությունները՝

- Դաստիարակության կազմակերպման առանձնահատկությունները պայմանավորված են աշակերտների տարիքային առանձնահատկություններով: Մանկավարժագիտության մեջ ընդգծվում է դպրոցական կրտսեր տարիքի զգայունությունը մեծահասակների դաստիարակչական ազդեցության նկատմամբ, այդ պատճառով շատ կարևոր է բավարար ուշադրություն դարձնել տարրական դպրոցում դաստիարակչական աշխատանքներին և ուսուցման արդյունավետ հնարների ընտրությանը:
- Դպրոցականների դաստիարակության վրա բացասական ազդեցություն է գործում դաստիարակների՝ անհատական զարգացման գաղափարով հրապուրվելը, երբ հաճախ անտեսվում է երեխաների սոցիալական փոխգործակցության, համագործակցության, հոգատարության ուղղությամբ սովորույթների դաստիարակության անհրաժեշտությունը: Այս համատեքստում կարևորում ենք ուսուցման արդյունավետ հնարների կիրառման տարբեր հնարավորությունների օգտագործումը:
- Շատ կարևոր է ուսուցման փուլային պլանավորումը: Մենք հաճախ մտածում ենք, որ ուսուցումը տեղի է ունենում գիտելիքի փոխանցում-գիտելիքի յուրացում մեխանիզմով: Մինչդեռ իրականում սովորելու գործընթացը փուլային է: Եվ ուսուցումը տեղի է ունենում աստիճանական ձևով: Այս առումով կարևոր է բացահայտել տարրական կրթության բովանդակության նորացման խնդիրները:



## ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ասատրյան Զ. Ա., Տարրական կրթություն մանկավարժություն, Երևան, Տիգրան Մեծ, 2017:
2. Աստվածատրյան Մ., Վարդանյան Ս., Օհանովա Ի., Պետրոսյան Ռ., Երեմյան Լ., Ուսումնառությունն ու դասավանդումը կրտսեր դպրոցում, Այրեքս, Երևան, 2001 :
3. Բրուտյան Վ., Կրտսեր դպրոցականների դաստիարակություն ժամանակակից խնդիրները, <<Մխիթար Գոշ>> գիտամեթոդական հոդվածներ, N1, Երևան, 2019
4. Էլկոնին Դ., Կրտսեր դպրոցականի ուսուցման հոգեբանություն, Երևան, 1975:
5. Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020:
6. Մանուկյան Ս., Ընդհանուր մանկավարժագիտություն, Զանգակ-97, Երևան, 2005: